

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱՅԻ» 100—ԱՄՅԱԿԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Գ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

Պարբերական մամուլը քաղաքակրթության արգասիք է, և հայ գործիչները տարբեր երկրներում հանդեսներ ու լրագրեր հրատարակելով հաստատում էին այն իրողությունը, որ պետականությունից զրկված հայրենիքի քաղաքական ծանր վիճակն անզոր է կասեցնելու հայկական քաղաքակրթության զարգացումը: 145 տարի է, ինչ օտարության մեջ հրատարակվում է «Բազմավեպը», իսկ «Հանդես ամսօրյան» 1987 թ. բոլորեց իր հարյուրամյակը: Երկու հանդեսներն էլ հրատարակվում են Մխիթարյանների կողմից, մեկը՝ Վենետիկում, մյուսը՝ Վիեննայում:

Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի անդամ, Շվեյցարիայի Ֆրայբուրգ քաղաքի համալսարանի պրոֆեսոր Մարկուս Անտոնիուս վան դեն Ուդենռիյնը Վենետիկի Մխիթարյանների գործունեության վայրը կոչում է «Հայկական կղզի Արևմտքում»¹: Եվ հիրավի, Ս. Ղազար կղզին, Իտալիայում գտնվելով հանդերձ, հռչակված է որպես հայկական հող: Այդպիսի մի հող է նաև Ավստրիայի մայրաքաղաքում Մխիթարյանների անունը կրող Mechitaristengasse փողոցը, որի Ձ' 4 շենքում բնակվող մի խումբ հայրենասերներ 1887 թ. հունվարին կյանքի կոչեցին «Հանդես ամսօրյայի» առաջին համարը:

Հանդեսի գործունեության սկզբի տարիների բնույթը պատկերելու համար բերենք մի հատված առաջին համարին կից հայտարարությունից. «Հանդեսիս ճակատը Բարոյական, Ուսումնական, Արվեստագիտական բաժնին ըստ բավականի բացատրիչ են, և պետք չեն թողուր մանրամասն խոստաբանությանց... Բարոյական մասին կվերաբերի բնականապես նաև Դաստիարականն (pédagogique), որուն կից են Դպրոցական վարչության կամ մեթոդներու ընտրությունն ու բարեփոխությունները... Նույն վախճանին կդիտենք ժողայեցնել նաև նորավեպ, մանրավեպ (nouvelles, anectodes) և այլն զվարճալիք: Ուսումնականն է առավելապես՝ գիտնական աշխարհի ճշգրտության հետազոտությանց և նորագույն տեսությանց արդյունքն և ազգային կամ օտարազգի գիտնական և բանասիրական երկասիրությունները հաղորդել... Արվեստագիտական և անոր հարակից տնտեսական (industriel, économique) ճյուղին վերաբերյալներն են գլխավորաբար մարդկային ճարտարության վերջին (նորագույն) կատարելագործությանց գյուտերը կամ փորձերը: Առաջիկա թերթս քաղաքական լրագիր չլլալով՝ կշատանանք ամեն անգամուն վերջին քաղաքական դիպաց, և ընդհանուր քաղաքականության ներկա դիրքն ի հանդես հանել Ամսօրյա ֆաղափական տեսություն մը տալով յուրաքանչյուր թվույն վերջը: Այս է շրջանն, որուն մեջ կհաժի առաջիկա պարբերական հրատարակությունս, որուն գույնն ու նկարագիրն արդեն հայտնի է վերագույն եղած ակնարկություններեն»:

¹ M. A. v. d. Oudenrijn. Eine armenische Insel im Abendland. Venedig, 1940, S. 6.

Սույն հայտարարությանը հաջորդող էջերում հաղորդվում են լուրեր լույսի և ջերմության, Պերսեպոլիսի սեպագիր արձանագրությունների, V դարի պատմագրության, աստղախույզ հեռագրի տակների, մոլորակների, նույնիսկ՝ մկների դեմ պայքարելու միջոցների և խնձորի օգտակարության մասին: Քաղաքական տեսության բաժնում շարադրվում է 1886-ի դեկտեմբերին Բուլղարիայում տեղի ունեցած իրադարձությունների տեսությունը: Հանդեսի անդրանիկ համարին կից ներկայացված է նաև խմբագրության ընտրած այն գրքերի ցուցակը, որոնք տպագրվել են Վիեննայի Մխիթարյան ապարանում և պարունակում են առավել կարևոր և հետաքրքրաշարժ տեղեկություններ: Ընթերցողին հանձնարարվում է բացի գիտական գրքերից (որոնք թվարկված են ցանկում) կարդալ նաև նամակագրություն սովորեցնող ձեռնարկ (հայերեն և ֆրանսերեն նամակներ գրելու համար), առաջարկվում է օգտագործել Միաբանության հրատարակած բազմալեզու բառարաններ, սովորել «խոսք հայրենասիրության» և այլն: Այսպես է սկսվում և ընթանում «Հանդես ամսօրյայի» գործունեությունը առաջին տարիներին: Հիմնադիր համարում հրապարակված չափածո հրավերում հայտնվում է, որ ամսագիրը ծառայելու է Թեմդայի, Վոլգայի, Սենայի շուրջ և այլուր բնակվող համայն հայությանը: Դանուբի ափից ողջուն է հղվում Արաքսին, խոստովանվում է, որ նորաստեղծ պարբերականը կարող է խրախուսանքի և արձագանքի:

Շուրջ Դանուբեան հզերքէն...

Սիրո ողջոյն տալ փութամ

Հոսանաց խրոխտ Երասիայ...

Ողջոյն, գոչե սրտագին...

Ջեղի, ո՛վ Հայք, մեր եղբայր՝

յօտարութեան գաղթական,

Զձեղ, որ Թեմզի, Վոլգայի

և Սենի շուրջ բոլորած...

Հայասէ՛ր, լո՛ւր զայս հրավէր...

խրախուսանաց ես արդ կամ:

Դուք, ո՞ր գիտունք, որ ազգիս

հյուսեք շղթայն գիտնական,

իցի՛ւ, սիրով զառաջին

փութայիք տալ արձագանք:

Անկեղծորեն արձագանքը չի ուշանում: Հանդեսին թղթակցել են սկսում և՛ Միաբանության անդամները, և՛ այլ երկրներում ապրող հայերը: Պարբերականի հեղինակությունը գնալով աճում է, օրինակելի կարգապահությամբ ամեն ամիս լույս տեսնող ամսագիրը, սակայն, գտնվում է տնտեսական ծանր վիճակում և պարբերաբար դիմում է հարուստներին ու բաժանորդներին՝ դրամական աջակցության խնդրանքով: Տպագրական ծախսերն աստիճանաբար ավելանում են և հարկադրում են բարձրացնել ամսագրի գինը: 1907 թ. փետրվարյան համարում (էջ 32) խմբագրությունը հայտարարում է. «Ընթերցասեր հասարակությունն մտադիր կընենք, թե անցյալ տարի Վիեննայի բոլոր տպարաններն ստիպվեցան զիջանիլ իրենց գործավորաց խիստ պահանջմանց, որով տպարանի գործավորաց վարձքը գրեթե կրկնապատկեցավ: Ցանկալի է մեզի Հանդես ամսօրյայի ծավալը նույն պահել, բայց որպեսզի Հանդեսն յուր ազգօգուտ ընթացքը շարունակել կարենա, առանց դրամական մեծ վնաս կրելու, հարկ անհրաժեշտ համարեցինք փոփոխություն մը՝ ընել գնույն մեջը: 1911 թ. Հանդեսին դրամական օգնություն են ցույց տալիս Հովհաննես Պալյանը և Բաբկեն Կյուլեսերյանը:

Հատկապես առաջին համաշխարհային տարիներին պակասում են ինչպես թղթակցությունները, այնպես էլ հրատարակչական հնարավորությունները:

Ամենամսյա պարբերականը հրատարակվում է մերթ ընդ մերթ միացյալ համարներով: Պատերազմից հետո էլ դրուժությունն առանձնապես չի լավանում: Խմբագրությունը դժվարանում է հոգալ տպագրական ծախսերը: 1927-ին, հանդեսի 10-ամյակի տարին, ամսագրի հրատարակության ծախսերը հոգում է Պողոս Նուբար Փաշան, հաջորդ տարին խմբագրությանը նպաստ տրամադրել է սկսում Գալուստ Կյուլպենկյանը, որի ծախսերով են տպագրվում 1928--1930 թթ. համարները:

Շրջակա վայրերում արդեն փակվել էին ընդամենը մի քանի ամսվա կամ տարվա կյանք ունեցած հայագիտական հանդեսները («Մեսրոբ», «Արմենիական»), 1934-ին Ֆրանսիայում դադարեց գործելուց Ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Հայկական ուսմանց հանդեսը», որը հիմնադրվել էր 1920-ին, փարիզում: Միջոցներ չգտնվեցին նաև օտարազգի հայագետների առաջարկով 1927 նվոպայում հայագիտական կենտրոն ստեղծելու համար: Այդուհանդերձ «Հանդես ամսօրյան» կարողացավ հաղթահարել դժվարությունները և հասավ մինչև մեր օրերը: Հարյուր տարվա հրատարակչական ծանրություններն իրենց վրա են կրել առաջին հրատարակիչ ու պատասխանատու խմբագիր Ռաֆայել Բարոնը (լեհահայ գիտնական Սադոկ Բարոնի ազգականը), խմբագրապետներ Ղ. Հովնանյանը (1887—89), Հ. Տաշյանը (1890—95), Գ. Դալմաթյանը (1895—98), Վ. Մելիքսեդեկյանը (1898—1901), Թ. Կետիկյանը (1901—1906), Հ. Համբարյանը (1906—1909), Ն. Ակինյանը (1909—1913, նո (1901—1906), Հ. Համբարյանը (1924—1930), Հ. Ոսկյանը (1938—1946, 1964—1968), Պ. Տեր-Պողոսյանը (1968—1981), Մ. Թոփալյանը (1981-ից մինչև օր): Առաջին խմբագիր Ղ. Հովնանյանի հետ միասին ամսագրի հիմնմանը եռադուր մասնակցություն են ցուցաբերել նաև Հ. Թումանյանը, Գ. Մենկիշյանը և ուրիշներ: Հանդեսի հիմնադիրն է Արսեն Այտընյանը:

Թվարկված գործիչներից յուրաքանչյուրը եղել է հրատարակչական գործի հմուտ կազմակերպիչ: Նրանց ջանքերի շնորհիվ է, որ անբարենպաստ պայմանները չեն կարողացել ազդել ամսագրի որակի վրա: Նույնիսկ պատերազմական տարիներին տպագրված համարներն աչքի են ընկնում հրատարակչական բարձր մակարդակով: Հրապարակվող նյութերի ընդգրկած գիտական բնագավառներն այնքան բազմազան են եղել, որ պահանջել են ունենալ աշխարհի ամենատարբեր լեզուներն արտահայտող տպագրական նշաններ ու տառեր, ինչպես նաև պատկերներ ու գծագրեր տպագրող համարանքներ: Վիեննական և վենետիկյան Մխիթարյանների տպարաններն առհասարակ համաշխարհային հուշակ են վայելում (տարբեր ազգերի ներկայացուցիչներից հաճախ պատվերներ են ստացվել այս կամ այն լեզվով գրքեր, հրատարակչական ալ միավորներ տպագրելու համար):

Հարյուրամյա ճանապարհի առաջին քառորդ դարում «Հանդես ամսօրյան» արդեն դարձել էր համաշխարհային հուշակ վայելող գիտական օրգան: 1911-ին հրատարակվեց Վիեննայի Մխիթարյան միաբանության հարյուրամյակին և Հանդեսի 25-ամյա հոբելյանին նվիրված մի ժողովածու, որի առաջաքանում խմբագիրը (Ն. Ակինյան) արդեն կարող էր համարձակ հայտարարել ամսագրի ձեռք բերած լուրջ հաջողությունների մասին: Ժողովածուն կոչվում էր «Հուշարձան» և ընդգրկում էր քառասուն հայագիտական հոդվածներ, որոնց հեղինակներն էին մասը օտարազգի գիտնականներ էին: Խմբագիրը գոհ էր, որ իրեն հաջողվել էր այդ գիտնականներին իր շուրջը համախմբել և լույս աշխարհ բերել նմանօրինակ մի եզակի ժողովածու: Նա գրում է. «Մենք փորձեցինք հրավիրել եվրոպացի բոլոր ծանոթ հայերենագետները, փափաքելով այսու դեպ ի հայ ուսում նոր եռանդ հառաջ բերել նաև անոնց մեջ, որոնք երկար տարիներ ի վեր լուծ էին հայերեն խոսիլ»: Ուրախությամբ կիսոստովանինք, որ մեր հույսը բոլորովին ի դերև չեկավ: Մեր հրավիրին ընդառաջ ելան գրեթե ամենքը՝ մեծ սիրով և պատրաստակամությամբ... Մենք անչափ ուրախ ենք,

որ կրցանք Հուշարձանիս մեջ ի մի ժողով հավաքել հայ թև օտար բաղմաթիվ ականավոր գեմբեր, որոնք ի միասին կպատմեն այն մեծ շահագրգռվածությունը, զոր այսօր հայ ուսումը կղարթուցանէ... Հուշարձանս կստանա առանձին իմն հրապույր մը, իբրև միակ երևույթը հայագիտական հորիզոնի վրա: Ցայսօր հայ դպրութիւնը հաճույքը չէր ունեցած այսպէս ի մի վայր խմբաված տեսնել յուր կորովի մշակները... Իցի՛վ Հուշարձանս գրգիռ ըլլար հայ ուսման անդրադուին հետազոտութեան» (էջ 53): Այս առաջաբանը տպագրված է նաև գերմաներէն, նկատի ունենալով օտարազգի ընթերցողին:

Միևնույն առաջարկում կարդում ենք այն մասին, որ Հանդեսն իր անմիջական գործից բացի ստանձնել է նաև գիտական այլ պարտականութիւններ. «Հանդեսը ուրիշ նպատակներ ալ ունիւր և ունիւր Կհուսար... գիտական համայնագիտարան մը արտագրելու, որ բառարանի ձևով պիտի նպաստեր ամեն հայ քանասերի... այնպէս, ինչպէս Mayer-ը կնպաստէ դերմանագիտոց, Larousse-ը դասագիտոց, և English encyclopedie անգղիացիոց»:

Հանրագիտարան հրատարակելու այս նվիրական իղձը չիրականացավ: Խմբագրութիւնը միաժամանակ հուշս էր հայտնում, որ ամսագիրն իր գործունեութեամբ հիմք է տալիս մտածելու նաև այլ երկրներում հայագիտական հանդեսներ հրատարակելու մասին: Խմբագրութեան ծրագրի մեջ է մտել նաև ձևագրաց ցուցակների հրատարակութիւնը, «մինչև հիմա 6—7 հատորներ տպագրեց, այսպէս ալ միտք ունեցած է բոլոր հին մատենագրութեան քննական բնագիրները հրատարակելու, և այն երկու ուղղութեամբ. մեկը՝ գիտնականաց համար, ծանոթագրութեամբ, իսկ երկրորդը՝ աշխարհարար թարգմանութեամբ, ժողովրդայն դյուրամատչելի գնով, իբրև ուրույն մատենաշար մը: Բայց ունի ուրիշ գիտավորութիւն մըն ալ. զատ մատենաշարով դյուրամատչելի ընել հասարակութեան՝ ի սկզբանէ մինչև հիմա Հայոց վրա որևէ լեզվով գրված գրքերը» (էջ 62—63):

Հինգ լեզուներով շարադրված (հայերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն) հոգովածների ժողովածուն իսկապէս բացառիկ երևույթ էր և այսօր կարող է ամենայն իրավամբ համարվել «Հանդես ամսօրյայի» գործունեութեան վերելքի տարիների հուշարձանը: Նրանում ընդգրկված բառասուն հոգովածները դասական կատարելութիւն ունեն: Բելգիացի գիտնական Պ. Պետերսը հանդես է եկել ս. Սարգիս Զորավարի վկայաբանութեանը նվիրված ուսումնասիրութեամբ: Անգլիացի հայագետ Կոնիքին ուսումնասիրել է հույն մատենագիր Իրինեոսի այժմ կորած հունարեն բնագրից կատարված հին հայերէն թարգմանութիւնը: Գերմանացի բժշկագետ է. Զայդելը, որը 1908-իս լայպցիգում հրատարակել էր Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարութեան» իր կատարած գերմաներեն անգլագական թարգմանութիւնն ու նրա ուսումնասիրութիւնը, «Հուշարձանում» հրապարակել է Կոստանդնուպոլսում ձեռք բերված հայկական հնատիպ մի աղթարական ժողովածուի նվիրված ուսումնասիրութիւն, որում բացահայտել է բժշկագիտական կարևորութիւն ունեցող տարրեր: Ի դեպ՝ նրա ձեռքին գտնված հազվագյուտ օրինակը մինչև այժմ չի գտնված («Հուշարձանում» հրապարակված հոգովածն այդ օրինակի միակ վկան է): Հանրաճանաչ հնագետ Լեհման-Հաուպտի ուսումնասիրութիւնը վերաբերում է Կեսաբանում հայտնաբերված խալդերեն (ուրարտերեն, նոր խուրիերեն) սեպագիր արձանագրութեանը: Յ. Մարկվարտը ներկայացրել է հորասանի գավառների ցանկը և այլ նյութեր: Թ. Յենսենը հեթիթերենի մեջ որոնել է ընդհանրութիւններ հայերենի հետ: Յոզեֆ Ստրիգովսկին, որին հայագիտութիւնը պարտական է «Էջմիածնի» (կամ «Փղոսկրյա») կոչվող ավետարանն ուսումնասիրելու և աշխարհով մեկ հռչակելու համար, «Հուշարձանում» արվեստաբանական քննութեան է ենթարկել հայկական մեկ այլ ձեռագիր: Մ. Բիտտները բացահայտել է ուշագրավ գծեր հունգարահայերի և լեհահայերի բարբառներում: Յ. Կարստը ձգտել է բնութագրել հայերին՝ ազգագրական տեսակետից:

Թվարկված և չթվարկված օտարազգի գիտնականներից բացի «Հուշարձանում» նյութեր են հրապարակել նաև Ստ. Մալխասյանցը, Հ. Աճառյանը, Ն. Ադոնցը և այլ նշանավոր հայ գիտնականներ, որոնցից առանձնանալու և հատուկ ուշադրության արժանանալու իրավունքը վաստակել է «Հուշարձանում» տպագրված նյութերից ամենաարժեքավորի՝ Ազաթանգեղոսի «Հայոց պատմություն» կրկնագրի հրատարակիչ Գ. Գալեմբյարյանը, Հայագիտությանը քաջ հայտնի և բազմիցս արժարժված սույն կրկնագրի հրատարակությունը «Հանդես ամսօրյայի» մնալուն կոթողն է, որի կարևորությունը պատկերացնելու համար բավական է հիշել Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանի անհանգրստությունն այն օրերին, երբ նրանք հրատարակության էին պատրաստում Ազաթանգեղոսի երկի քննական բնագիրը (տպագրվեց 1909 թ., Թիֆլիսում) և ձևերի տակ շունեին երկու տարի հետո «Հուշարձանում» հրատարակված բնագիրը. «Պակասը լրացնելու համար դիմեցինք հ. Գ. վ. Գալեմբյարյանին, խնդրելով, եթե հնարավոր է՝ տալ մեր հրատարակության համար յուր պատրաստած աշխատությունը»²։ Գալեմբյարյանը մեծ դժվարությամբ էր վերծանել հազարամյա մագաղաթի վրա գրված և ապա ջնջված ու նորից երևացած տառերը և կամենում էր անձամբ հրատարակել իր տառապանքի արդյունքը։ Այդ իսկ պատճառով էլ Ազաթանգեղոսի Թիֆլիսյան հրատարակիչների խնդրանքը չբավարարվեց, և Ազաթանգեղոսը հրատարակվեց առանց կրկնագրի պարունակած բոլոր տարրերիցվածքների։ Հասկանալի է, թե «Հուշարձանում» հրատարակված բնագիրն ինչպիսի՝ մեծ ծառայություն պետք է մատուցեր Ազաթանգեղոսի հրատարակիչներին։ Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 56 ձեռագրի կազմում գտնվող պատառիկների վրա ընդօրինակված աղբյուրները «ապահովապես Թ-Ժ դարեն է»³։ Ժամանակի ընթացքում ձեռագիրը մաշվել, քայքայվել է և երկու-երեք հարյուր տարի հետո ընկնելով XIII—XIII դդ. ապրած մի գրիչի ձեռք՝ օգտագործվել է որպես գրության նոր նյութ։ Այդ գրիչը քերելով ջնջել է IX—X դդ. ընդօրինակված Ազաթանգեղոսի երկը և մաքրված մագաղաթի վրա արտագրել է մեկ այլ հեղինակի (Անդրեաս Կեսարացու) գրածը։ Գալեմբյարյանից դեռևս ավելի քան կես դար առաջ մասնագետները նկատել էին այս նոր գրիչի գրածի տակից երևացող ազաթանգեղյան բնագիրը և ուշադրություն հրավիրել նրա վրա, սակայն «Հանդես ամսօրյային» էր վիճակված լույս աշխարհ հանել թանկագին գանձը, որի մասին առաջին տեղեկությունները հայտնվել էին դարձյալ Վիեննայում հրատարակված «Ծվրոպա» պարբերականում (1848, № 6, 8, 9)։

«Հուշարձանին» հաջորդեցին տարբեր ժամանակներում տպագրված նաև այլ ժողովածուներ, նվիրված Հանդեսի հոբելյաններին։ Միայն «Հուշարձանում» տպագրված նյութերի բազմազանությունից արդեն իսկ երևում է, թե որքան լայն են եղել պարբերականի հետաքրքրությունները։ Եթե սկզբից մինչև վերջ թվարկեինք հարյուր տարվա ընթացքում «Հանդես ամսօրյայում» տպված նյութերի հեղինակների միայն ազգանունները, դարձյալ հնարավոր չէր լինի մեկ հոգով սահմաններում սպառել ցուցակը։ Այբբենական կարգով թվարկենք շատերից միայն շատ քերիչ, որոնց ազգանունների հիման վրա կարելի է դատել ամսագրի արժարժած գիտական խնդիրների անպարփակ սահմանների մասին. Աբեղյան, Ադոնց, Ալպոյաճյան, Ակինյան, Աղբալյան, Աճառյան, Ավգերյան, Բասմաջյան, Բյուզանդացի Նորայր, Գալեմբյարյան, Գովրիկյան, Էսապալյան, Թորգոմյան, Ինգլիզյան, Խալաթյան, Կյուլեսերյան, Կոզյան, Հապուզյան, Հովնանյան, Հովսեփյան, Մանանդյան, Մառ, Մատիկյան, Մենեվիշյան, Ոսկյան, Զոբանյան, Պողոսյան, Ջնտոյան, Սարուխան, Վարդանյան, Տաշյան, Տեր-Մկրտչյան, Տեր-Պողոսյան, Օրմանյան։

² Ազաթանգեղոս. Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր Մկրտչեան և Ստ. Կանանեանց. Տիֆլիս, 1909, էջ ԺԲ.

³ Հ. Տաշյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա. Վիեննա, 1895, էջ 261.

Եթե կազմենք թվարկված հեղինակների բնակավայրերի քարտեզը, կտեսնենք, որ «Հանդես ամսօրյային» թղթակցել են ամենատարբեր երկրներում ապրած ու գործած մարդիկ: Քիչ չեն նաև այն վայրերը, որոնցում բնակվել են Հանդեսի օտարազգի թղթակիցները. Բաղդադ, Բենվենիստ, Գարիս, Դևյուր, Դյուվադի, Լեհման-Հաուստ, Կարիեր, Կարստ, Կոնիերի, Հյուբլման, Մակլեր, Մարկվարտ, Մեյն, Մյուլլեր, Պեդերսեն, Պետերս, Ստրիգուսկի, Շյուց, Ուդենոյն, Ֆեյդի, Ֆետտեր: Թվարկված գիտնականների տարբեր լիզոնցոդների ավելի լայն շրջանակների և այդ հղանակով Հանդես ամսօրյային» չափն են միջազգային ասպարեզ ու դասել XIX—XX դդ. հրատարակված ամենահեղինակավոր գիտական պարբերականների շարքը:

Պարբերականի հիմնական մտահոգությունը եղել է մեր երկրի ու ժողովրդի պատմության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունն ու հրատարակությունը: Տպագրվել են հոդվածներ Հայոց աշխարհի աշխարհագրության, թագավորական տների, արքայական դրամների, բեռնափոխակների, հայ-հոմեական-ընդհանրական-ասորական և այլ փոխհարաբերությունների վերաբերյալ: Հրապարակվել են նյութեր Հայաստանին վերաբերող ուղեգրությունների մասին (Բեննդորֆ, Բոյն, Բուռնաբի, Բրունհոֆեր, Դելինշ, Լանդերսսկի, Յիմմերեր, Շյուլման): Մեծ տեղ է հատկացվել հայկական գաղութների պատմությանը (Մուզավիա, Ռումինիա, Հունդարիա, Լեհաստան, Հոլանդիա): Դրվել է օտար երկրներում գործունեություն ծավալած նշանավոր հայ թագավորների և գիտության ու քաղաքական այլևայլ գործիչների մասին: Հնագիտական ուսումնասիրություններում արտացոլվել է պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի, վիմագիր արձանագրությունների, տապանաքարերի, սեպագրերի հիման վրա ուսումնասիրված հայկական իրականությունը: Բանահյուսական աղբյուրների միջոցով բացահայտվել են հայ դիցաբանության մյուս ժողովուրդների դիցաբանությունների հետ ունեցած առնչությունները: Հայկական պարականոն գրույցների աղբյուրը համաքրիստոնեական ժամանակների հետ (Արդարի գրույցը, Ահեղ դատաստանի պատումը, այլևայլ սրբերի վկայաբանությունը): Իրավաբանական, ազգագրական, բժշկագիտական, ալքիմիական, տիեզերագիտական-տոմարական և այլ նյութերի օգտագործմամբ ուսումնասիրվել է հայոց մտքի, վարք ու բարքի, կրոնական վանքի պատմությունը: Հին ձեռագրերում պահպանված մանրանկարներն ու գրքային արվեստի այլ տարրերը, ճարտարապետական հուշարձանները, գորգագործությունը և արվեստի այլ բնագավառներից մեզ հասած նյութերն աշխարհով մեկ տարածել են հայ միջնադարյան մշակույթի կոթողների համբավը:

Օտար լեզուներից հայերեն են թարգմանվել և «Հանդես ամսօրյայում» հրատարակվել հայագիտական հետաքրքրություն ներկայացնող նյութեր, կազմվել են օտարալեզու գրքերի ցուցակներ, որոնք մեծապես օգնել են հայ ընթերցողին՝ որոնելու և գտնելու անհրաժեշտ նյութեր մեր ժողովրդի վերաբերյալ: Պարբերաբար հրատարակվել են հայերեն գրքերի մատենագիտական ցանկեր, տարբեր երկրներում պահվող հայկական ձեռագրերի ցուցակներ, հայ տպագրության պատմությունն արտացոլող հոդվածներ: Հետմահու հրատարակվել են Յ. Շրյոդերի, Լա Կրոդի, Ն. Բյուզանդացու, Հ. Տաշյանի, Ն. Ակինյանի և այլոց աշխատությունները: Համառոտակի ամփոփագրերով կամ գոտախոսականներով ներկայացվել են օտարալեզու հայագիտական հանդեսները («Armeniaca», «Caucasiaca»): Կենսագրական հոդվածներ ու մահախոսականներ են տպվել բազմաթիվ հայ և օտար գործիչների մասին: Մեծ արժեք են ներկայացնում այդ հոդվածներում հրատարակված լուսանկարները, որոնցից շատերը հայտնի են միայն «Հանդես ամսօրյայից» և կարևոր ծառայություն են մատուցում մասնագետներին: Հանդեսն ունի նաև գրական բաժին,

որը պարբերաբար ծանոթացրել է հայ գրողներից ու բանաստեղծներից բացի նաև ռուս և եվրոպացի հեղինակների ստեղծագործություններին:

Հայոց լեզվին նվիրված ուսումնասիրությունները հիմնականում վերաբերել են գրաբարի քերականությանը, հնդեվրոպական լեզուների հետ ունեցած առնչություններին, մեռած լեզուների (հին հունարեն, լատիներեն, խեթերեն) փոխաբերություններին, բառարանագիրներին անհայտ մնացած ձեռագրական նյութերին: Մատենադարանի հուշարձաններից ուսումնասիրվել են Օղնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Դավիթ Անհաղթի երկերը: Հայ թարգմանական գրականության հուշարձաններից ուշագրության կենտրոնում են գտնվել՝ Սոկրատ Սքոլաստիկոսի, Փիլոնի, Իրինեոսի, Պլատոնի, Խիկար Դմաստոնի, Ալեքսանդր Մակեդոնացու կյանքն ու գործն արտացոլող հին հայերեն թարգմանությունները:

Հանդեսը չի բավարարվել միայն ուսումնասիրությունների հրատարակությամբ, այլ տպագրել է նաև ձեռագրերից և այլ գրավոր աղբյուրներից քաղված նյութեր (ինչպես Ագաթանգեղոսի կրկնագիրը): Ամսագրում տպագրված հոդվածաշարերը հետագայում հրատարակվել են առանձին հատորներով:

«Հանդես ամսօրյայի» թղթակիցներից ու խմբագիրներից հատկապես Ն. Ակինյանի հոդվածների համառոտ բովանդակությունը տպագրվել է նաև գերմաներեն ամփոփագրերով: Նույն բախտին են արժանացել նաև այլ հոդվածներ: Յավով պետք է նշել, որ այդ ամփոփագրերի միջոցով եվրոպական գրականության մեջ երբեմն թյուր կարծիքներ են թափանցել Մովսես Խորենացու մասին: Վաստակաշատ խմբագիրն ու ականավոր հայագետը Պատմահոր մասին իր ոչ ճիշտ կարծիքները (Խորենացու ապրած ժամանակի, «Հայոց պատմության» արժանահավատության վերաբերյալ) տարածել է եվրոպացի հայագետների շրջաններում: Նրա իսկ հեղինակությամբ անընդունելի մի հոդված է դեռնում հանրահայտ «Դասական բանասիրության հանրագիտարանում» (Paulys Lexikon...):

Մեծանուն հայագետը շուրջ կես դար վարեց խմբագրապետի պատվավոր պաշտոնը: «Հանդես ամսօրյան» նրան է պարտական իր երևելի շատ հաջողությունների համար: Հատկապես մեծ է նրա վաստակը այլևայլ վայրերում լայն տեսած հայագիտական ուսումնասիրությունների ներկայացման գործում: Թվարկենք միայն անուններն այն օտարազգի հայագետների, որոնց երկերը և առաջ զնահատանքի են արժանացել Ակինյանի գրախոսականներում: Բաբելոնյան, Բրիտ, Դիսսեն, Էնդրես, Էսսադ-Բել, Գարիտ, Մեսսինո, Գրիլլսման, Փրիգոր Պետրովիչ (լեհահայ), Պրուքեր, Քյունիգ, Լաուխերտ, Լեվի, Բարդենհեյմեր, Սվոբոդա, Վայցման և այլք: Հայ հեղինակների երկերին նվիրված գրախոսականների թիվը անհամեմատ ավելի շատ է: Դրանցից մեկում Ակինյանը Աճառյանի «Արմատական բառարանը» կոչում է «դարակազմիկ աշխատություն» և արժանացնում է այսպիսի բարձր գնահատականի. «Պիտի բացականչելի, թե հեղինակը ձեռնամուխ եղած է հանճարինս: Անհատական ուժը չէր կարող հասնել այս ընդարձակածավալ կառուցվածքին կատարման: Բայց Աճառյան հասած է բարավ: Նա տված է աշխատություն մը, որ կմնա աննախընթաց օրինակ նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»:

«Հանդես ամսօրյայի» անգնահատելի վաստակներից ամենահիմնականների շարքում են գտնվում մեր միջնադարյան մատենագիրների երկերի հարյուրավոր գրախոսականները և բանասիրական քննությունները:

«Ազատ ամեն արգելիչ տեսակետների պիտի գոչենք. Արժանի է, որ ազգը տոնե և այս հոբելյանը»: Այսպես է գրել Գ. Մենևիշյանը «Հանդես ամսօրյայի» 1912 թ. հունիսի համարում, «Մշակի» 40-ամյակին նվիրված հոդվածում, և մենք կարող ենք բարձր գնահատականը կիրառել հենց գնահատող ամսագրի նկատմամբ: Հիրավի, արժանի է, որ «Հանդես ամսօրյայի» հարյուրամյակն այսօր հիշվի հայագիտությանը մատուցած նրա անգնահատելի ծառայության իրական չափի պատշաճ զգացմամբ: «Մշակի» գնահատականը բացահայտում

է պարբերականի շատ կարևոր մի առավելությունը՝ լայնախոհությունը, Հայտնի է, որ «Մշակին» համախոհ չէին շատերը և ոմանք էլ թշնամարտը էին տրամադրված նրա նկատմամբ: Գաղափարակից չէր նաև «Հանդես ամսօրյան»: Այդուհանդերձ՝ Միլիթարյանները վերանում էին ընդդէմ «արգելիչ տեսակետներից» և՛ առաջնորդվելով անկողմնակալ չափանիշներով, ըստ արժանվույն գնահատում էին հայ լավագույն պարբերականներից մեկի ու նրա խմբագիր Գրիգոր Արծրունու վաստակը:

«Մշակն» էլ իր հերթին բարձր էր գնահատում Միլիթարյան միարանությունը գործունեությունը: Վերջինիս հարյուրամյա հոբելյանի առիթով, 1911-ին, Վիեննայում ստացվեցին բաղմամբով նամակներ ու հեռագրեր, որոնցից էր նաև «Մշակի» չափածո հեռագիրը.

Բաղմագարյան ուխտին՝ հարատևություն,
Արթուն Արբահոր՝ արեշատություն:

Հեռագրեր ստացվեցին նաև Լոնդոնից, Մոսկվայից և բազմաթիվ այլ բաղմագրերից: Լոնդոնից հեռագրել էին տիկին Բաֆֆին ու որդիները: Մոսկվայից բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյանը ջերմորեն շնորհավորում էր «լույսի ու գիտության հայ և անխոնջ մշակին», «պատկանելի միարանությունը»:

Շնորհավորանքները կարելի է շարունակել նաև այսօր և ցանկալի, որ հարյուրամյա «Հանդես ամսօրյան», որն այլևս դժբախտաբար ամսօրյա չէ և վերածվել է ասրեգրի (վերջին հատորները տպագրվում են ասրին մեկ անգամ), ևսինքն ամսօրյա դառնա և շարունակի իր արգասավոր գործունեությամբ նվաճալու ասպրեցնել հայագիտությունը: Արամ Խաչատրյանին նվիրված գերմանական ընդարձակ ուսումնասիրությունը (Խոմաս Ավգենի 1983-ին Վիեննայում տպագրված գերմաներեն մենագրության արտատպությունը), Մ. Կրիստինի հոդվածը՝ հայ բժիշկ Ավետիքի անունը կրող «Avedikstrasse» փողոցի մասին (այս անունն է կրում Վիեննայի փողոցներից մեկը, սկսած 1894 թ. հուլիսի 13-ին), Նորայր Բյուզանդացու անտիպ երկերի հրաատարակությունը, Նոր Լուսնարանի լիակատար համարարառը և վերջին տարիներին «Հանդես ամսօրյայում» տպված այլ նյութեր իրենց գիտական բարձր մակարդակով հույս են ներշնչում հարյուրամյա հոբելյարի ապագայի նկատմամբ:

100-ЛЕТИЕ «АНДЕС АМСОРЕА»

Доктор филол. наук Г. В. АБГАРЯН

Резюме

Арменоведческий журнал «Андес амсореа» (изд. в Вене) стал одним из самых авторитетных научных органов, который издается в основном на армянском языке (статьи публикуются иногда и на немецком, французском, английском, итальянском языках). Тема публикаций: история, языкознание, археология, география, этнография, искусствоведение, критика, библиология, рецензии. Предметом изучения являются памятники письменности, древнеармянские переводы из греческой, сирийской, латинской и других литератур, сравнительное изучение армянского языка на фоне других индоевропейских языков. В специальном разделе освещаются жизнь и деятельность видных арменоведов, аннотируются арменоведческие публикации, издающиеся в разных странах, публикуются библиографические списки печатных книг, каталоги древних рукописей, хранящихся в различных книгохранилищах мира. Наиболее важные исследования снабжаются резюме на немецком языке. Кроме статей журнал публикует также тексты древних писателей, информации о достижениях мировой науки.